

Մինաս զարգանեցի (մեր մօր կուսէ պապը), Յորութիւն Չէլէպի կիւլլապեան, Անդրէաս Չէլէպի և այլ բազմաթիւ արհեստագետներ:

Գործոյս համեմատութիւնը շնորհիւ յիշեալ ամիրաներուն և ամիրապետներուն վրայ զատ զատ տեղեկագորի: մանաւանդ որ լիակատար տեղեկո թիւններ կը պակսին մեզի յաւիտենապէս, կամ զի անոնց սերունդներուն պատճառներն ալ՝ մեծ մասով՝ չենք կըրնար արձանագրութեան մը շափ վաւերական համարի: Ուստի կը շատանանք շեշտելով միայն հոս՝ թէ ժամանակին ազդեցիկ ձայն և հնչուն գրպան ունեցողներն ասոնք են ընդհանրապէս, որոնց մէջ կան մինչեւ մշրս հարիւր տարուան գերդաստաններ, օրինակի հոտար կէլիկէլեաններն ու Սագայեանները:

Է.

Այլ աստուածաբանական երեջ խուճբէն քիւ մը ետքը կը հասնին՝ իբրեւ վերջին տրցակն սմիրաներուն՝ Պուսեցի Ղազէլ Արթին հռչակաւոր ամիրան, Պալեան կարապետ Ամիրան, Տատեան Յովհաննէս Պէյն ու Սէրվէրեան Յովհաննէս աղան կամ ամիրան, որ քարի և փայտի վրայ քանդակելու եւրոպեան գեղարուեստ մտցուց հայերուն մէջ ու գլխաւոր սատարողն եղաւ Սկիւտարի հին ճեմարանին՝ մանաւանդ իր իսկ զբամալն ի հեճուկս Միսաք և Ճանիկ ամիրաններուն՝ որ, չլիտենք ինչ պատճառով, ուխտած էին կըսուի՝ ախոռի վերածել այդ հոգետուն փարախը մուսաներուն: Կաեւ Երկանեան Յարութիւն և Փիշմիլ ամիրաները՝ Ղազէլի հանրական գործակից, Յովհաննէս ամիրայ Աղնաւորեան, հաճի Մարաիրոս Պաղտասարեան, Մաշտուտ Սարիմեան, Պաղտասար Գասպարեան, Մահտեսի Յարութիւն Չէլէպի կէլիկէլեան (մեծ հայրը Վսեմ. տօթթ. խորասանճեան էֆ.ի), Յովհաննէս Բինկեանեան, որոնց մէկ քանին էին հին հիւանդանոցը շինողներէն ու վա-